ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/156

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15366-2019 գրությամբ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.09.2019թ.-ի թիվ 129 գրության հիման վրա, 17.09.2019թ.-ին «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Ի լրումն վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16118-2019 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 01.10.2019թ.-ին թիվ 138 գրությունը:

Բողոքներ քննող անձի 17.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 24.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 24.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.10.2019թ.-ին:

2. «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 12.09.2019թ.-ի թիվ 129 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ներկայացնում է «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 09.09.2019թ.-ին միակողմանի լուծված «ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2» պայմանագրի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. սեպտեմբերի 9-ի թիվ 01.1/26-1/14378-2019 գրության պահանջների ապահովման նպատակով:

Ի լրումն վերոնշյալ գրության, Պատվիրատուն 01.10.2019թ.-ին թիվ 138 գրությամբ ներկայացրել է «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և

«Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքված թիվ «ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2» ծածկագրով պայմանագրի պատճենը:

3. <u>«Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15366-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/156 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացում:

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի

պատվերի, մատակարարումը կատարվելու է շաբաթական ռեժիմով, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 14-րդ փողոց 14 հասցեով:

«Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 09.09.2019թ.-ին թիվ 125 գրությամբ դիմելով «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին՝ հայտնել է հետևյալը. *«Հրազգանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցի և Ս/Ձ Գրիգոր Բաբայանի միջև 08.01.2019թ. կնքված թիվ ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2 գնման պայմանաիրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին և 5-ին ընդհանուր հաշվով պետք է մատակարարեր 8 կգ հաց, սակայն մատակարարումները չեն իրականացվել: Հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետի պահանջները՝ Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցը 2019թ. սեպտեմբերի 9-ին միակողմանի լուծել է թիվ ՀՎՍԴ-ԳՀԱՊՅԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2 պայմանագիրը: Տեղեկացնում եմ, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900128000347 հաշվեհամարին ենթակա է գանձման 31280 ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը):»:*

www.gnumner.am համացանցային կայքում 11.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքված թիվ «ՀՎՍԴ-ԳՀԱՊՅԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2» ծածկագրով պայմանագիրը Պատվիրատուի կողմից 09.09.2019թ.-ից միակողմանի լուծվել է:

Բողոքներ քննող անձը 27.09.2019թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15931-2019 գրությամբ դիմել է «Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և խնդրել է տրամադրել 12.09.2019թ. թիվ 129 գրությամբ ներկայացված Մասնակցի հետ կնքված պայմանագիրը (համաձայնագիրը) և այլ անհրաժեշտ փաստաթղթեր (առկայության դեպքում):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15366-2019 գրությամբ «Գրիգոր

Բաբայան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կագով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և համապատախան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն' պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացում:

«Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 09.09.2019թ.-ին թիվ 125 գրությամբ դիմելով «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին՝ հայտնել է, որ Հրազգանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցի և Ս/Ձ Գրիգոր Բաբայանի միջև 08.01.2019թ. կնքված թիվ «ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում մասնակիցը 2019թ.-ի սեպտեմբերի 4-ին և 5-ին ընդհանուր հաշվով պետք է մատակարարեր 8 կգ հաց, սակայն մատակարարումները չեն իրականացվել: Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետի պահանջները՝ 2019թ.-ի սեպտեմբերի 9-ին միակողմանի լուծել է թիվ Պայմանագիրը:

Սակայն Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ թիվ «ՀՎՍԴ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-18/2-2» ծածկագրով գնման Պայմանագիրը սեպտեմբերի 9-ին միակողմանի լուծվել է՝ մասնակցի կողմից 2019թ.-ի սեպտեմբերի 4-ին և 5-ին մատակարարումներ չիրականացնելու պատճառով: Սակայն, հարկ է նկատել, որ

Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով Պատվիրատուն իրավունք ուներ պայմանագիրը լուծեր, երբ Վաճառողը՝ Մասնակիցը, էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ նույն կետի համաձայն՝ պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Այլ կերպ ասած՝ Պատվիրատուն իրավունք չուներ, մասնակցի կողմից 2019թ.-ի սեպտեմբերի 4-ին և 5-ին մատակարարումներ չիրականացնելու հիմքով, սեպտեմբերի 9-ին՝ հինգերորդ օրը չլրացած, միակողմանի լուծել Պայմանագիրը: Նույնիսկ սեպտեմբերի 4-ից հաշշված, Պայմանագրով սահմանված միակողմանիորեն լուծելու հիմքը Պատվիրատուի մոտ ծագելու էր սեպտեմբերի 10-ին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի կողմից չի խախտվել Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթները, քանի որ պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների 5 օրից ավել խախտման փաստ չարձանագրվեց: Որպիսի պայմաններում չի կարող համարվել պայմանագրի էական խախտում, այն պարզ պատճառով, որ խախտումը էական է համարվում այն դեպքում, երբ մատակարարման ժամկետը խախտվել է 5 օրից ավելի:

Ուստի, վերոգրյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը եզրակացնում է, որ Պատվիրատուի գործողությունները չեն բխել Պայմանագրով սահմանված կողմերի իրավունքներից, Պայմանագրի լուծումը ոչ իրավաչափ է և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը, սույն գործի քննության ընթացքում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով ներկայացնել կողմերի միջև կնքված պայմանագիրը (համաձայնագիրը) և այլն: Սակայն Պատվիրատուի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեց ապացույց այն մասին, որ Պատվիրատուի և Մասնակցի միջև 08.01.2019թ.-ին կնքված պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ, ինչի արդյուքնում կնքվել է համաձայնագիր, որի ուժի մեջ մտնելու օրվանից պետք է սկսվեր ապրանքի մատակարարումը, քանի որ Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ժամանակահատվածը: Այս պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ նշված համաձայնագրի բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել, երբ է սկսվել

ապրանքի մատակարարումը և արդյոք Մասնակցի կողմից համաձայնագիր կնքելուց հետո 04.09.2019թ.-ին և 05.09.2019թ.-ին ապրանքի չմատակարարելը հանգեցրել է որևէ ժամկետների խախտմանը, թե՞ ոչ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի կողմից պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորության խախտում թույլ չի տրվել, որն էլ կարող էր հանգեցնել պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15366-2019 գրությամբ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**